



RENAULT
Passion for life

Եր Renault KOLEOS





A scenic landscape featuring a dirt road that curves through a valley. In the background, there are steep, rocky mountains under a clear sky. To the left, a calm lake is visible. The foreground shows a rocky, sparsely vegetated slope with some green and yellow shrubs. The overall tone is natural and adventurous.

Նոր Renault Koleos

Իմ երկիր, իմ հորիզոններ, իմ Renault

Նոր Renault KOLEOS Նվաճելով նոր հորիզոններ

Նրանց համար, ովքեր պատրաստ են նվաճելու նոր հորիզոններ, ներկայացնում ենք նոր պրեմիում դասի լիաքարշակ ամենագնաց Renault Koleos-ը:

Նոր Renault Koleos-ը ավտոմեքենայի յուրօրինակ դիզայնի և ժամանակակից լուծումների մարմնացումն է: Նրա նորաձև և տպավորիչ արտաքին տեսքը ներշնչում է հուսալիության զգացում և արթնացնում է ցանկություն դեպի նոր արկա ծախսերությունների:

Ընդարձակ և հեշտ ադապտացվող սրահը և պրեմիում դասի ժամանակակից սարքավորումները Renault Koleos-ին դարձնում են էտալոն իր սեգմենտում:

Փորձարկեք և կհամոզվեք: Renault-ն սահմանում է նոր ստանդարտ արտաճանապարհային ավտոմեքենաների սեգմենտում:



Իմ հորիզոններ, իմ Renault





Ուշադրություն գրավելու արվեստ.

Նոր Renault Koleos-ում զգացվում է նրա առաջատար մոդել լինելը : Նրա խարիզման՝ վառ դետալների մեջ է թափքի ամբողջ երկայնքով քրոմապատ գծերը ընդգծում են նոր լիաքարշակ ամենագնացի դինամիկ կերպարը և խիզախ բնույթը, իսկ ամբողջությամբ լուսադիոդային Pure vision համակարգը, Renault Koleos-ին տալիս են էլ ավելի եզակի և արտահայտիչ «հայացք»:

Pure vision համակարգը ապահովում է 20%-ով ավելի լավ լուսարձակում, քան հալոգենային լույսերը, և ապահովում է լավ տեսանելիություն օրվա մութ ժամերին: Լուսադիոդային հետևի լույսերը Edge Light տեխնոլոգիայի միջոցով ապահովում են հստակ, վառ և եռաչափ էֆեկտ՝ ներդաշնակորեն ամփոփելով նոր Renault Koleos-ի տպավորիչ պատկերը: Էլեգանտ և երկգույն 18 դյույմանոց թեթևաձույլ անվահեծերն ընդգծում են Renault Koleos-ի ձգտումն ու պատրաստակամությունը դեպի նոր բացահայտումներ

Իմ հորիզոններ, իմ Renault





Նրբագեղություն դետալներում

Renault – ի դիզայնի մտածված փիլիսոփայությունը նկատելի է նոր Koleos-ի յուրաքանչյուր դետալում:

Հատուկ ուշադրություն է դարձվել նոր Koleos-ի սրահի նյութերի բարձր որակին. նորաձև կիսափայլ քրոմը ոչ միայն ամբողջացնում է նոր արտաճանապարհային ինտերիերի դիզայնը այլ նաև տարբերվում է երկարակեցությամբ: Բարձրորակ կաշեպատ նստատեղերը, ամբողջացված դեկորատիվ եզրակարերով, ստեղծում են Նրբագեղություն և ընդգծում են ինտերիերի դիզայնը:

Նոր Renault Koleos – հարմարավետության նոր մակարդակ:

Իմ հորիզոններ, իմ Renault



Հարմարավետության Նոր մակարդակ

Նոր Renault Koleos - ի սրահը ձեր պատկերացումները հարմարավետության մասին կբարձրացնի լիովին նոր մակարդակի: Խորասուզվեք ինտուիտիվ տեխնոլոգիաների և կատարյալ մասնիկների աշխարհ, որտեղ յուրաքանչյուր մասնիկ հոգում է ձեր հարմարավետության մասին:

Կառավարման վահանակները հարմարավետ տեղակայված են կենտրոնական կոնսոլի վրա. 7 դյույմանոց էկրանով բոլոր համակարգիչ, նոր սերնդի R-LINK մուլտիմեդիոն համակարգ, անհատականացվող սարքավորումների վահանակը և էլեկտրական խելացի համակարգերը կդարձնեն Koleos-ի վարումը հաճելի և հարմարավետ:

Զգացեք պրեմիում ամենագնացի բոլոր առավելությունները ծանոթության առաջին իսկ պահից:

Ձեր հարմարավետության տեխնոլոգիաները



Նոր Renault Koleos-ը հագեցած է 8,7 դյույմանոց պլանշետային էկրանով, որը հանդես է գալիս որպես միասնական կառավարման կենտրոն, անհատականացված պարամետրերով, որոնք կորորդիսացնում են BOSE պրեմիում դասի օուդիո համակարգի աշխատանքը, ինչպես նաև նավի գացիայի, ազատ ձեռքերի ռեժիմում հեռախոսազանգերի, ռադիոյի և այլ՝ վարորդին օգնող համակարգերի միջոցով:

Այս հզոր սենսորային էկրանը ապահովում է Multi touch տեխնոլոգիան և պարզևսում է մաքսիմալ պարզություն օգտագործման մեջ, դարձնելով այն այնքան հեշտ որքան հեռախոսի կամ պլանշետի օգտագործումը:

Ձայնային հրահանգները վարորդին հնարավորություն են տալիս ավտոմեքենայի հեշտ կառավարմանը և վարման ընթացքում ընձեռում են մաքսիմալ ապահովության զգացում:

Բորտային համակարգի տվյալները պատկերվում են 7 դյույմանոց գունավոր և կարգավորվող TFT էկրանին, որը գտնվում է ղեկավարման վահանակի վրա:

Ստեղծեք ձեր տրամադրությունը Renault Koleos-ում՝ 5 գունային համադրությունների շնորհիվ, որպեսզի ճանապարհորդությունները դառնան էլ ավելի հարմարավետ և հաճելի:

Ճանապարհորդեք առաջնակարգ դասով՝ նոր Renault Koleos-ի հետ:

Իմ հորիզոններ, իմ Renault





*Նախատեսված Premium տարբերակի համար



Իմ հորիզոններ, իմ Renault

Էտալոնային ընդարձակություն

Մեծ, ընդարձակ սրահը, հարուստ սարքավորումները, տարողունակությունը և հարմարավետությունը դարձնում են նոր Renault Koleos-ը իդեալական իր դասի մեջ:

Renault Koleos-ն առաջարկում է վարորդի և առջևի ուղևորի համար հարմարավետ և էլեկտրակարգավորվող նստատեղեր՝ 6 և 4 ուղղություններով համապատասխանաբար: Վարորդի նստատեղի անատոմիկ ձևը արտահայտված է կողային աջակցությամբ և շոգ եղանակի սառեցման համար նախատեսված օդափոխության համակարգով: Երկկողմանի կլիմատ կոնտրոլ համակարգը, հագեցած օդաջրային համակարգով, ապահովում է հարմարավետ միջավայր ամբողջ սրահում, անկախ արտաքին եղանակային պայմաններից: Ուր էլ որ գնաք, ճանապարհորդեք հարմարավետ:



Իմ հորիզոններ, իմ Renault

Ազատություն շարժումներում

Նոր Renault Koleos-ը հոգ է տանում այն մասին, որ դուք հեշտությամբ և հարմարավետությամբ իրականացնեք ձեր ամենօրյա աշխատանքները:

Արտաճանապարհայինը հագեցած է բեռնախցիկի «Ազատ ձեռքեր» ավտոմատ բացման համակարգով: Բավական է միայն անցկացնել ոտքը բեռնախցիկի ստորին հատվածով՝ ցուցիչի կողքով և բեռնախցիկի դուռը կբացվի:

Բեռնախցիկը փակվում է նույն տարբերակով. հրահանգը ճանաչելուց հետո, բեռնախցիկը կփակվի, և դուք կլսեք ձայնային ազդանշան:

Բեռնախցիկի ծավալը, որը 538 լ. է, տարողունակ է և բազմաֆունկցիոնալ: Easy Break համակարգի շնորհիվ, դուք կարող եք կոճակի մեկ հպումով ծալել հետևի նստատեղերը, մեծացնելով բեռնախցիկի ընդհանուր ծավալը մինչև 1960 լ:






Bose® Surround: Ձայնի կատարելություն

Էքսկլյուզիվ արեմիում դասի Bose® աուդիոհամակարգը՝ մշակված հատուկ նոր Renault KOLEOS ի համար, կտեղափոխի ձեզ վառ էմոցիաների աշխարհ:

Իդեալական տեղադրված բարձր տեխնոլոգիապես հագեցված 12 բարձրախոսները, ուժեղացուցիչն ու թվային ձայնային պրոցեսորը, վերարտադրում են կենդանի կատարման որակն ու յուրաքանչյուր գործիքի ձայնը՝ տալով զգացողություն, որ Դուք գտնվում եք համերգային համալիրում: Վայելեք մաքուր, կենդանի և հարուստ ձայնը Renault Koleos-ի հետ:

Իմ հորիզոններ, իմ Renault



ՆՈՐ Renault KOLEOS

Կատարյալ հարմարավետություն ճանապարհներին:

Ինչպիսին էլ որ լինեն ճանապարհային և եղանակային պայմանները, Ռուք կստանաք իրական հաճույք վարման ընթացքից:

Նոր Renault KOLEOS – ի վառ արտաքին տեսքը ներդաշնակորեն համակցվում է արտակարգ արտաճանապարհային պայմանների հետ՝ շնորհիվ բարձր ճանապարհային լուսածերպի և գերազանց անցունակության: Վստահելի էներգիան տեսնվել կախոցը կապահովի ընթացքի հիասքանչ հարթություն, հեշտ կառավարում և դիմացկունություն ցանկացած ճանապարհին:

Նոր Renault Koleos-ի արտաճանապարհային հատկությունները թույլ են տալիս չմտածել հայաստանյան ճանապարհների որակի մասին. վարորդի և ուղևորի հարմարավետությունը ապահովված է ցանկացած իրադրությունում:

Նոր Renault KOLEOS-ը կընդլայնի ձեր պատկերացումները վարման ընթացքի հարմարավետության մասին՝ շնորհիվ ցուրտ կլիմային ադապտացվող համակարգերի. բոլոր նստատեղերի տաքացում, պատուհանի և դեկանիվի տաքացում և միշտ հարմարավետ ջերմաստիճան ավտոմեքենայի սրահում՝ ճանապարհորդության հենց սկզբից, շնորհիվ Renault Start շարժիչի հեռակառավարվող համակարգի



Իմ հորիզոններ, իմ Renault



Իսկական արտաճանապարհային հետազոտություն

Ինչպիսին էլ որ չլինեն ճանապարհային և եղանակային պայմանները, Դուք միշտ գործում եք առաջին դիրքերում՝ շնորհիվ All Mode 4X4-ի խելացի համակարգի:

Փոխանցառուփի աշխատանքի օպտիմալ ռեժիմի ընտրությունը թույլ կտա Ձեզ ինքնավստահ երթևեկել ինչպես արտաճանապարհային այնպես էլ քաղաքային պայմաններում: Ընտրեք All Mode 4X4-ի խելացի համակարգի 3 ռեժիմներից մեկը և վայելեք թեթև և ապահով երթևեկություն:

Ռեժիմ 4x2



Շարժվելով չոր տարածության վրայով, ընտրեք 4x2 Էկոնոմ ռեժիմը, որը տալիս է պտտող մոմենտի ուժը առջևի անիվներին: Այն կօգնի Ձեզ նվազեցնել վառելիքի ծախսը:

Ռեժիմ 4x4 Lock



Շարժվելով ավազի, ցեխի կամ քարքարոտ տարածության վրայով՝ միացրեք Lock ռեժիմը. մշտական լիաքարշակ ռեժիմը և պտտող մոմենտի ուժի ֆիքսված բաշխվածությունը կապահովեն ավտոմեքենայի անցունակությունը, և հստակ կառավարելիությունը նույնիսկ նման բարդ պայմաններում:

Ռեժիմ AUTO

Համակարգը հետազոտում է ճանապարհի շփման պայմաններն ու մակարդակը և ցուցիչի տվյալների հիման վրա հաշվարկում է տոող մոմենտի ուժի իդեալական բաշխում առջևի և ետևի տնիների միջև: Անհրաժեշտության դեպքում ետևի անիվներին կարող է փոխանցվել քարշակման ուժի 50%-ը:

Իմ հորիզոններ, իմ Renault

Ավտոմատ փոխանցման տուփ CVT X-Tronic

Վարելու ընթացում իրական հաճույք ստանալու համար մեր մասնագետները փոխկապակցել են միմյանց տեխնոլոգիան, հուսալիությունը և տնտեսումը: Նոր Renault KOLEOS-ը համալրված է հզոր շարժիչներով, ակտիվ ավտոմատ փոխանցման տուփով, CVT X-Tronic համակարգով (վերջին սերնդի վարիատորային փոխանցման տուփ) և խելացի All Mode 4x4-i համակարգով:

CVT X-Tronic փոխանցումատուփը հատուկ նախագծված է Renault KOLEOS –ի համար և ընդգծում է աշխատանքի սահունությունն ու վառելիքի խնայողությունը: Հատուկ կարգավորման շնորհիվ CVT X-Tronic-ը կարող է ինչպես առանց աստիճանի փոփոխել փոխանցումային հարաբերակցությունը, այնպես էլ իմիտացնել փոխանցումների փոխարկումը՝ օպտիմալացնելով թե՛ վառելիքի խնայողաբար սպառումը, թե՛ անընդմեջ արագության ադմուկի նվազեցումը: Ցանկության դեպքում վարորդը կարող է ընտրել յոթ աստիճանային հաջորդական ռեժիմ և օգտագործել շարժիչով արգելակելու հնարավորությունը:

Ցուրտ եղանակային պայմանների ադապտացման համակարգեր



Renault-ի մասնագետները հատկանշական ուշադրություն են դարձրել ցուրտ եղանակին ադապտացվելու խնդրին: Անկախ նոր Renault KOLEOS-ի համալրվածությունից, այն նաև հագեցած է առջևի և հետևի ստատեղների*, ղեկանիվի, ինչպես նաև դիմապակու և հետևի ապակու տաքացմամբ: Ձեր ճամփորդության հարմարավետության համար առջևի բաժակակալները ունեն տաքացնող և սառեցնող հնարավորություն:

*Նախատեսված E3 տարբերակի համար

Իմ հորիզոններ, իմ Renault



Ավտոմեքենան համալրված է նաև Renault Start շարժիչի հեռակառավարման համակարգով, որը թույլ է տալիս շարժիչի անվտանգ մեկնարկումը՝ տաքացնելով այն, ինչպես նաև ապահովում է հարմարավետ ջերմաստիճան սրահում նույնիսկ էքստրեմալ ցածր և բարձր ջերմաստիճանային պայմաններում: Համակարգը ակտիվանում է երկու տարբերակով՝ Քարտ-բանալու միջոցով Ծրագրավորման միջոցով, նոր սերնդի R-LINK մուլտիմեդիա համակարգի էկրանի օգնությամբ:

Խելացի օգնություն ճանապարհին

Նորարարական տեխնոլոգիաները և խելացի համակարգերը հեշտացնում են ավտոմեքենայի կառավարումը վարորդի համար՝ թույլ տալով ամբողջությամբ վերահսկել իրավիճակը ճանապարհին՝ պահպանելով հանգստություն և վստահություն յուրաքանչյուր ճանապարհային իրավիճակում:

Ձեր ուղևորությունը, նոր Renault KOLEOS-ի հետ, միշտ կլինի հարմարավետ և ապահով:



Խելացի ավտոմատ կայանման համակարգը օգնում է իրականացնել կայանումը առանց դեկին դիպչելու: Համակարգը վերլուծում է կայանման տարածքը և որոշում է լավագույն հետագծային շարժումը: Հնարավոր է իրականացնել չորս տեսակի մանևր՝ շուգահեռ Ուղղահայաց Անկյունային շուգահեռ ավտոկայանատեղից դուրս գալը Վարորդին միայն անհրաժեշտ է սեղմել գազի և արգելակման սեղմակները, հաշվի առնել ձայնային ազդանշանները, որոնք զգուշացնում են օբյեկտների հեռավորության վրա գտնվելը: Իսկ վարորդին մնում է միայն հետևել էկրանի ազդանշանին և հետևել բազմաֆունկցիոնալ էկրանի հրահանգներին:



Համակարգը զգուշացնում է վարորդին բաժանարար գծանշանների խախտման այն դեպքում, երբ վարորդի կողմից շրջադարձի ցուցիչները միացված չեն:

Իմ հորիզոններ, իմ Renault



Հեռահար լուսարձակների ավտոմատ անցումային համակարգը հոգում է ոչ միայն ձեր, այլև ձեր շրջապատի մասին: Եթե դուք ավտոմեքենան վարում եք բնակեցված վայրերում, շարժվում եք մեկ այլ մեքենայի հետ նույն ուղղությամբ կամ հանդիպակաց, համակարգը ավտոմատ կերպով հեռահար լույսերը փոխում է մոտ լույսերի:



Կույր գոտիների տեսանելիության համակարգը վերահսկում է այն տրանսպորտային միջոցները, որոնք գտնվում են ավտոմեքենայի ետնամասում, ժամանակին զգուշացնելով Ձեզ ուղղության անսպասելի շեղման մասին՝ միացնելով ետևի տեսքի հայելիների լուսային ցուցիչները:

Պատրաստ յուրաքանչյուր փորձության

Նոր Renault Koleos-ը առաձևանում է 2 տեսակի բենզինային շարժիչներով՝ 2.0 լիտր (144 ձիաուժ) և 2.5 լիտր (171 ձիաուժ) և 2.0 լիտրանոց դիզելային շարժիչ (177 ձիաուժ):



2.0 լիտրանոց բենզինային շարժիչով Koleos-ը (144 ձիաուժ) հագեցած է ուղղակի վառելիքի ներարկման համակարգով և ունի ալյումինե բլոկ, ինչի շնորհիվ էլն այն ունի բավականին կոմպակտ չափեր և ցածր զանգված: Այն տալիս է 144 ձիաուժ 6000 պտ/ր, իսկ գագաթնակետը կազմում է 200 ն/մ 4400 պտ/ր պայմաններում: Այս շարժիչը ապահովում է լավ դինամիկա և վառելիքի ցածր սպառում, քանի որ 80% պտտման պահը հասանելի է սկսած 2400 պտ/ր-ից:

2.5 լիտրանոց բենզինային շարժիչ (171 ձիաուժ): 200 ն/մ պտտման պահը հասանելի է սկսած 1800 պտ/ր, այդ պատճառով էլ շարժիչը տարբերվում է իր բացառիկ արագացմամբ ցածր և միջին պտույտների ժամանակ, ինչը հատկապես հարմար է արտաճանապարհային պայմաններում: Շարժիչի մաքսիմալ հզորությունը կազմում է 171 ձիաուժ 6000 պտ/ր պայմաններում, իսկ լավագույն պտտման պահը հավասար է 233 ն/մ 4000 պտ/ր պայմաններում: Այս շարժիչը ունի կատարելագործված կառուցվածք, որը օպտիմալացնում է վառելիքի ծախսը:

Տուրբոդիզելային 2.0 լիտրանոց շարժիչ (177 ձիաուժ): Այն համարվում է նոր Koleos-ի ամենահզոր շարժիչը, որը հագեցած է տուրբոմղիչով....

Իր մաքսիմալ հզորությունը կազմում է 177 ձիաուժ 3750 պտ/ր պայմաններում, իսկ լավագույն պտտման պահը հասնում է մինչև 380 ն/մ 2000-3000 պտ/ր-ում: Այս շարժիչը առաջարկում է

Իրագործելու տարբերակները



Մարգարտյա սպիտակ



Փայլող Սպիտակ



Պլատինե



Բեժ



Կապույտ



Կարմիր շագանակ



Մուգ մոխրագույն



Սև մետալիկ

Իրագործելու տարբերակները

Executive



- Անվտանգության 6 բարձիկներ
- Երկգոտի կլիմատ կոնտրոլ համակարգ
- Կրուիզ կոնտրոլ համակարգ
- Անձրևի և լույսի ցուցիչ
- Բանալի-քարտ՝ «Ազատ ձեռքեր» համակարգով
- Ղեկանիվի և դիմապակու տաքացման համակարգ
- Առջևի նստատեղերի տաքացում
- Շարժիչի մեկնարկում հեռակառավարմամբ Renault Start
- Ավտոմատ արգելակման համակարգ
- Մուլտիմեդիա նավիգացիոն համակարգ R-LINK2՝ 7 դյույմանոց հորիզոնական էկրանով
- Առջևի և հետևի կայանման ցուցիչներ (parktronic)
- Հետևի տեսախցիկ
- Կաշվեպատ ղեկանիվ
- Հետևի LED լուսարձակներ
- Թեթևաձույլ անվահեծեր 18" TARANIS

Օպցիոնալ

- Կաշվեպատ նստատեղեր
- «Հարմարավետ» փաթեթ
 - Թեքությամբ կարգավորվող գլխահենակներ
 - Easy Break համակարգ: Ավտոմատ ծալվող նստատեղեր
 - Վարորդի և ուղևորի նստատեղերի էլեկտրակարգավորում
 - Վարորդի նստատեղի գոտկատեղային կարգավորում

*Նստատեղերն ամբողջությամբ կաշվեպատ (մշակված կաշի) նստատեղերի վերին բարձիկի հատվածները, մեջքամասի առջևի հատվածները, գլխահենակները և կողային աջակցման հատվածները: Մնացած մասերը էկո կաշվից են:

Իրագործելու տարբերակները

Premium



- Կաշվեպատ ստտեղեր
- Ամբողջական լուսադիոդային լուսարձակներ Pure Vision
- Ներքին լուսադիոդային լուսավորման փաթեթ
- Մուլտիմեդիա նավիգացիոն համակարգ R-LINK2 8.7 դյույմանոց պլանշետային տեսակի էկրանով
- Առջևի ստտատեղերի էլեկտրակառավարում
- Վարորդի ստտատեղի գոտկատեղային կարգավորում
- Easy Break համակարգ. Ետևի ստտատեղերի ավտոմատ ծալում
- Կույր գոտիների վերահսկման համակարգ
- Առջևի և Ետևի կայանման ցուցիչներ (parktronic)
- Հետևի տեսքի տեսախցիկ
- Երկգույն թեթևաձույլ անվահեծեր 8" ARGONAUTE1

Օպցիոնալ

- Էլեկտրակարգավորվող պանորամային տանիք
- Փաթեթ «Անվտանգություն»
 - Շարքերի բաժանման վերահսկման համակարգերի փաթեթ
 - Հեռահար լուսերի ավտոմատ միացման համակարգ
- Փաթեթ «Կոմֆորտ»
 - Ավտոմատ կայանման ինտելեկտուալ համակարգ
 - Բեռնախցիկի ավտոմատ բացման համակարգ
 - Հետևի ստտատեղերի տաքացում
 - Հովացվող առջևի ստտատեղեր

*Ստտատեղերն ամբողջությամբ կաշվեպատ (մշակված կաշի) ստտատեղերի վերին բարձրիկի հատվածները, մեջքամասի առջևի հատվածները, գլխահենակները և կողային աջակցման հատվածները: Մնացած մասերը էկո կաշվից են:



Նոր Renault KOLEOS- ն առաջարկում է կաշվե սրահի լայն և բարձրորակ ընտրություն: Ձեզ միայն ծնունդ է ընտրել գույնը. դասական սև՝ TITAN BLACK, նուրբ մոխրագույն՝ PLATINIUM GRAY կամ նորաձև՝ SIENNA BROWN:

Աքսեսուարներ



1. Դռների շեմային հատվածի լուսավորում
2. Պատյան քարտ-բանալու համար
3. Հայելիների քրոմապատ վրադիրներ
4. Կողային շեմեր

5. Накладки на пороги с подсветкой



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՆՈՐ KOLEOS	Executive	Premium
ՇԱՐՇԻՉ	2,0	2,5
Վառելիք	բենզին	բենզին
Էկոլոգիական չափորոշիչ	եվրո 5	եվրո 5
Աշխատանքային ծավալը սմ³	1997	2488
Միտոցների քանակը	4	4
Սեղման աստիճանը	11,2	10,0
Փականների ընդհանուր քանակը	16	16
Առավելագույն հզորությունը ձ/ուժ	144	171
Առավելագույն հզորությունը կՎտ/ ձ/ուժ, ր.	106 (6000)	126 (6000)
Առավելագույն պտտող մոմենտ, Նմ պտ/ր	200 (4400)	233 (4000)
Ներարկման տեսակը	Վառելիքի բաշխված ներարկում Էլեկտրոնային կառավարմամբ	Վառելիքի ուղղակիորեն ներարկում
Փոխանցումատուփի տեսակը	CVT X-Tronic ադապտիվ կառավարման ալգորիտմով	
Ղեկային կառավարում	Էլեկտրաուժեղացուցիչ	
Շրջադարձի տրամագիծը, մ	11,4	
Կախոց		
Առջևի կախոց	Անկախ, զսպանակային, ՄակՖերսոն տիպի, ընդլայնակի կայունության ստաբիլիզատորով	
Հետևի կախոց	Անկախ, բազմալծակ, զսպանակային, հիդրավլիկ փոխազուցավոր մեղմիչներով, ընդլայնակի կայունության ստաբիլիզատորով	
Անիվներ և անվադողներ		
Անվադողների չափսերը	225/60 R18	225/60 R18
Արգելակային համակարգ		
ABS Bosch	9,1	9,1
Առջևի արգելակներ	Սկավառակային 296 x 26	Սկավառակային 320 x 28
Հետևի արգելակներ	Սկավառակային 292 x 16	
Դինամիկ բնութագրեր		
Անբրոդինամիկա, մ²/ Cx	0,919/0,353	0,919/0,353
Առավելագույն արագություն, կմ /ժ	187	199
Թափառքի ժամանակահատված 0-100 կմ/ժ	11,3	9,8
Տեղից 1000 մ տարածություն անցնելու ժամանակամիջոցը, վրկ	33,6	31,9
Վառելիքի ծախսը		
Քաղաքային ցիկլում լ /100 կմ	9,4	10,7
Արտաքաղաքային ցիկլում լ /100 կմ	6,4	6,9
Խառը ցիկլում լ /100 կմ	7,5	8,3
Co2 արտանետումների քանակը խառը ցիկլում, գր / կմ	174	192
Վառելիքի բաքի տարողությունը, լ	60	60
Ճանապարհային լուսածերպ, մմ	210	210
Ձանգվածային բնութագրեր		
Առանց ծանրաբեռնվածության զանգված, կգ	1600	1607
Առջևի առանցքի ծանրաբեռնվածությունը, կգ	1080	1080
Հետևի առանցքի ծանրաբեռնվածությունը, կգ	1260	1260
Տեխնիկապես հասանելի առավելագուն զանգված TC, կգ	2140	2157
Արգելակներով սարքավորված կցորդի առավելագույն զանգվածը, կգ	1500	1650
Առանց արգելակների սարքավորված կցորդի առավել. զանգվածը, կգ	750	750


Սարքավորումներ և օպցիաներ

Տարբերակ	Executive	Premium
	Gm2 M55C C4	Gm3 N05C C4
Շարժիչ (լ), քարշակում, փոխանցատուփ	2,0, 4x4, CVT X-tronic	2,5, 4x4, CVT X-Tronic
Վառելիքի տեսակը	Բենզին	Բենզին
Շարժիչի հզորությունը, ձ/ուժ	144	171
Սերիական սարքավորումներ՝ ավտոմեքենայի գնի մեջ ներառված		
ԴԻՉԱՅՆ		
Կողային քրոմապատ մոդիխցներ	Բ	Բ
Առջևի և հետևի թափքի գույնի թափարգելներ	Բ	Բ
Դիմացի թափարգելների պաշտպանություն	Բ	Բ
Տակնիքի երկու զուգահեռ ճաղաշարք (ռեյինգ)	Բ	Բ
18-դյույմանոց թեթևածույլ TARANIS միագույն սկավառակներ	Բ	–
18-դյույմանոց թեթևածույլ ARGONAUTE երկգույն սկավառակներ ավաստե հղկմամբ	–	Բ
Դիմապակիների և կողապակիների տոնավորում	Բ	Բ
Շրջադարձ կատարելու համար կրկնակի ազդանշան հետևի ապակիների վրա	Բ	Բ
ԻՆՏԵՐԻԵՐ		
Սև գործվածքով պաստառապատում	Բ	–
Սև կաշվե պաստառապատում TITAN BLACK	–	Բ
Կաշվեպատ դեկ	Բ	Բ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ		
Բոլոր համակարգիչ 7" TFT էկրանով	Բ	Բ
Շարժիչի աշխատացման Start/Stop կոճակ	Բ	Բ
Խելացի All Mode 4x4-i համակարգ	Բ	Բ
Կրոմիզ կոնտրոլ՝ արագության չափի և դեկանիվի կառավարմամբ	Բ	Բ
Ավտոմատ կանգառի արգելակ	Բ	Բ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ		
9երեկային ընթացքի լուսադիոդային կրակներ	Բ	Բ
Հալոգեն լամպեր	Բ	–
Լիարժեք լուսադիոդային օպտիկա, Ներառյալ մոտարձակ և հեռարձակ լույերը Pure Vision	–	Բ
Լուսադիոդային հետևի լուսարձակներ Edge Light	Բ	
Մրահի լուսավորություն (5 գույն)	–	Բ
Սարքավորումների վահանակի մթնոլորտային գունավորում (5 գույն)	Բ	Բ
Բեռնախցիկի լամպերի լուսավորություն	Բ	Բ
Ձեռնոցի տուփի լուսավորում	Բ	Բ
Ծխաման	Բ	Բ
ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ		
Հեռակառավարմամբ հիմնական բանալի	Բ	Բ
«Ազատ ձեռքեր» ֆունկցիայով բանալի- քարտ	Բ	Բ
Հեռակառավաչման շարժիչի միացման համակարգ Renault Start	Բ	Բ
Անձրևի և լույսի ցուցիչ	Բ	Բ
Երկգոտի լիմառ-կոնտրոլ	Բ	Բ
Դեկանիվի տաքացում	Բ	Բ
Դիմացի նստատեղերի տաքացում	Բ	Բ
Դիմապակու տաքացում	Բ	Բ
Հետևի կողմապակու տաքացում	Բ	Բ
Էլեկտրակարգավորվող և տաքացվող արտաքին հայելիներ՝ ծայման էլեկտրական շարժակով	Բ	Բ
Վարորդի կողմի ապակիների իմպուլսային ամբարձիչներ	Բ	Բ
Հետևի ապակիների էլեկտրապատվարում	Բ	Բ
Դեկանիվի կառավարումը ըստ բարձրության	Բ	Բ
Դիմացի նստատեղերի կիսավտոմատ կառավարում	Բ	–
Վարորդի նստատեղի էլեկտրապատվարում (6 ուղղությամբ) գոտկային օժանդակմամբ	–	Բ
Ուղտրի նստատեղի էլեկտրապատվարում (4 ուղղությամբ	–	Բ
Էլեկտրոքրոմ հետևնային հայելիների ավտոմատ մեցցում	Բ	Բ
1/3-2/3 համամասնությամբ ծավլող հետևի նստատեղի թիկնակ	Բ	Բ
Easy Break համակարգ: Ետևի նստատեղերի թիկնակներն ավտոմատ ծավլող հարթ հատակի մակարդակով	–	Բ
Կարգավորվող կենտրոնական արմնկակալ՝ հովացվող պահուստային մասով	Բ	
R-LINK2 նավիգացիոն մուլտիմեդիա համակարգ՝ հորիզոնական 7 էկրանով	Բ	–
R-LINK2 նավիգացիոն մուլտիմեդիա համակարգ՝ պլանշետային 8,7 տեսակներով	–	Բ
Հետադարձ տեսանելիության տեսախցիկ	Բ	Բ
Հետևի պարկտրոնիկ	Բ	Բ
Լուսարձակների լվացում	–	Բ

Տարբերակ	Executive	Premium
	Gm2 M55C C4	Gm3 N05C C4
Շարժիչ (i). քարշակում, փոխանցատուփ	2,0, 4x4, CVT X-Tronic	2,5, 4x4, CVT X-Tronic
Վառելիքի տեսակը	Բենզին	Բենզին
Շարժիչի հզորությունը, ձ/ուժ	144	171
Սերիական սարքավորումներ՝ ավտոմեքենայի գնի մեջ ներառված		
ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ		
Փոխանցումների փոխարկման ինդիկատոր	Բ	Բ
Eco համակարգ	Բ	Բ
Բեռնախցիկի ցանցի կցորդման կեռիկներ կեռիկ վարդակ	Բ	Բ
Եզրային արևապաշտպան հայելիներ	Բ	-
Եզրային արևապաշտպան հայելիներ լուսավորությամբ	-	Բ
ԱՆՀՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ		
Էքստրեմալ կապի համակարգ «ЭРА ГЛОНАСС»	Բ	Բ
համակարգ՝ արգելակային ճիգերի էլեկտրոնային բաշխմամբ և արտակարգ արգելակման համակարգով	Բ	Բ
կուրսային կայունության համակարգ A զառիվեր մեկնարկին օժանդակման համակարգ	Բ	Բ
Վարորդի և առջևի ուղևորի անվտանգության բարձիկներ	Բ	Բ
Առջևի անվտանգության կողային բարձիկներ ապահովության վարագույրներ դիմացի և հետևի նստատեղերի համար	Բ	Բ
Առջևի ուղևորի անվտանգության բարձիկի ապաակտիվացում	Բ	Բ
Կոպր զոտիների վերահսկման համակարգ	-	Բ
Հավելյալ լուսավորությամբ հակամառախոտային լապտերիների առկայություն շրջադարձերի համար	Բ	Բ
Անվաղողերի ժնշումն ապահովող սենսոր	Բ	Բ
Ըստ բարձրության կարգավորվող առջևի և հետևի գլխակալներ	Բ	Բ
Առջևի գլխակալներ с регулировкой по наклону	-	Բ
Կողային նստատեղերի ամրանների համակարգ	Բ	Բ
Չամջրացվածդիմացի նստատեղերի ամրագոտիների ազդանշան	Բ	Բ
Եռակետային ամրագոտիներով հագեցված հետևի նստատեղեր	Բ	Բ
Առջևի նստատեղերի ամրագոտիների ապահովության կառավարումը՝ ըստ բարձրության	Բ	Բ
Պահեստային անվաղողեր ”	Բ	Բ
ԱԴԱՊՏԱՑՈՒՄ ՏԵՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ		
Շարժիչի աշխատանքի նախապատրաստում սառը եղանակային պայմաններում	Բ	Բ
Ողողիչ մեծ ծավալով բաք լ	Բ	Բ
Անվալանձարների պաշտպանություն	Բ	Բ
Արտադրողի երաշխիք՝ տարի կամ կմ վազք ըստ առաջնահերթության	Բ	Բ
Հակակորոզիոն պաշտպանություն՝ տարվա երաշխիք	Բ	Բ
ԾՊՑԻՈՆԱԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ		
«Մետալիկ» ներկվածք	O	O
Պաշտպանական տանիքը էլեկտրական ծածկով	-	O
«Ապահովության» փաթեթ		
• Ավտոմատ միացում անջատում մոտարժակ հետարժակ լուսային համակարգ	-	O
• Ճանապարհագծի ց շեղման նախազգուշացնող համակարգ		
«Հարմարավետության» փաթեթ		
• Ճանապարհագծի ց շեղման նախազգուշացնող համակարգ	O	-
• Easy Break համակարգ		
• Առջևի վարորդի էլեկտրոնային կառավարում և գոտկային աջակցում		
«Հարմարավետության +» փաթեթ		
• «Առանց ձեռք» բեռնախցիկը բացվող ավտոմատ համակարգ	-	O
• Ավտոմատ կայանման խելացի համակարգ		
• Առջևի նստատեղերը օդափոխիչ համակարգով		
• շետևի նստատեղերը տաքացնեղ համակարգով		
Կաշվե նստատեղեր սև գույնի TITAN BLACK	O	-
Կաշվե նստատեղեր մոխրագույն PLATINIUM GREY	-	O
Կաշվե նստատեղեր շագանակագույն SIENNA BROWN	-	O

Բ = դասական; O = օպցիոնալ; - = չի առաջարկվում:

Արտաքին չափսեր



ԲԵՆԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՔԻ ՉԱՓՍԵՐ, Լ

Բենախցիկի ծավալ	538
Բենախցիկի ծավալը ծավալած նստատեղերով	1690

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓՍԵՐ, ՄՄ

A	Եզրաչափային երկարություն	4672
B	Անվախի բազա	2705
C	Առջևի ցվիթ	930
D	Հետևի ցվիթ	1038
E	Առջևի անվամբ	1591
F	Հետևի անվամբ	1586
G/G1	Լայնություն առանց արտաքին հայելիների / հայելիներով / ծավալած հայելիներով	1843/2063/1864
H	Բարձրություն առանց ծանրաբեռնվածության	1673
H1	Բարձրություն առանց ծանրաբեռնվածության բաց բենախցիկով	2118
J	Բենախցիկի շեմի բարձրությունն առանց ծանրաբեռնվածության	770
K	Հանապարհային լուսածերպն առանց ծանրաբեռնվածության	210

L	Ետևի ուղևորների ծնկների տարածությունը դիմացի նստատեղից	289
M	Սրահի լայնությունը առջևի ուղևորների արմունկների մակարդակից	1483
M1	Սրահի լայնությունը ետևի ուղևորների արմունկների մակարդակից	1456
N	Սրահի լայնությունը առջևի ուղևորների ուսերի մակարդակից	1449
N1	Սրահի լայնությունը ետևի ուղևորների ուսերի մակարդակից	1419
p	Առջևի նստատեղերից տանիք տարածությունը, նստատեղերի միջև դիրքի դեպքում	953 TN / 891 TO*
Q	Ետևի նստատեղերից տանիք տարածությունը, առջևի նստատեղերի միջև դիրքի դեպքում	911 TN / 903 TO*
Y	Բենախցիկի լայնության հասանելիությունը վերևի հատվածում / առավելագույնը	902 / 1091
Y1	Բենախցիկի լայնության հասանելիությունը ներքևի հատվածում	1034
Y2	Բենախցիկի ներքևի լայնությունը անվազամարների մակարդակի վրա	1066
Z1	Առավելագույն երկարությունը հետևի ծավալած նստատեղերի դեպքում	1889
Z2	Առավելագույն երկարությունը մինչև հետևի նստատեղերը	973
Z3	Բենախցիկի ստորին հատվածից դարակն ընկած տարածության բարձրությունը	365

*Էլեկտրական լյուկով \ առանց Էլեկտրական լյուկի



Դապ Renault-ի հետ՝ +374 (10) 24-75-99

Սույն հրապարակումը պարունակում է տպագրության պահի դրությամբ առավել հստակ և վերջին տեղեկությունները: Փաստաթուղթը զանգված է ավտոմեքենաների և նախատիպերի փորձնական նմուշների հիման վրա: Մեփական արտադրանքի անընդհատ կատարելագործման քաղաքականության շրջանակում Renault-ն իրեն իրավունք է վերապահում ցանկացած պահի փոփոխություն կատարել նկարագրվող և ներկայացվող ավտոմեքենաների բնութագրերի և կառուցվածքի, ինչպես նաև լրացուցիչ սարքավորումների մեջ: Այդ փոփոխությունների մասին տեղեկությունները հնարավորինս կարճ ժամկետում հասցվում են Renault-ի պաշտոնական ներկայացուցիչներին: Շահավետությունն ապահովվում է առաջարկի գործողության ընթացքում՝ խորհուրդ տրվող առավելագույն գների և 01.06.2016 դրությամբ՝ խորհուրդ տրվող առավելագույն գների միջև եղած տարբերության հաշվին: Առաջարկները չեն հանդիսանում հանրային օֆերտա: Կախված մատակարարման երկրից՝ որոշ մոդիֆիկացիաներ կարող են տարբերվել նկարագրվող մոդելներից, սարքավորումների որոշ տեսակներ (սերիական, օպցիոնալ կամ լրացուցիչ) կարող են բացակայել: Ամենաթարմ տեղեկությունները կարելի է ստանալ պաշտոնական դիլերից: Տպագրական տեխնիկայի սահմանափակ հնարավորություններից ելնելով՝ սույն փաստաթուղթում թափքի գույների կամ սրահի լրանշակման վերարտադրությունները կարող են որոշակիորեն տարբերվել իրականից: Հեղինակային իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման ամբողջական կամ մասնակի վերարտադրումը ցանկացած ձևով և ցանկացած միջոցներով առանց Renault-ի գրավոր թույլատրության արգելված է: